ԵՐԱԶ

ԼԵՌԵՆՑԻ

Լուսին գիշերով անեզրը դաշտում
Ես ընկած էի վիրաւոր կրծքով.
Մահու պաղութիւնն մարմինս էր տիրում,
Ճակատս ոռոգւած երկնային ցօղով։

Ես ընկած էի՝ միակ շնչաւոր
Բիւրաւոր մարդկանց դիերի շարքում...
Վճիտ էր երկինքն աստղազարդ, անդորր,
Դիւթական դէմքով լուսինն էր փայլում։

Եւ յիշում էի այն ահեղ մարտը,
Երբ փողի ձայնից մարդկան փրկութեան
Ժողովուրդների լէգէոնները
Ապստամբել էին ընդդէմ չարութեան։

Անարդար կեանքի հնացած ապարան
Խիստ դղրդիւնով քանդւում էր, գլորւում;
Մինչ տանջւած ստրկի ձայնը յաղթական
Մարդկութեանն մի նոր կեանք էր աւետում։

Ո՞ւր էք, ընկերներ... հրաժեշտ ձեզ վերջին...
Մնացած ոյժերըս իմ ժողովելով,
Ես ինքըս ըստուեր՝ դիերի միջին
Սկսեցի թափառել գաղտնի սաւառւով։

Փայլում էր լուսինն և լուսաւորում
Բիւր ընկածների պաղած դիակներ...
Ահա եղբայրքս, ընկերս եմ տեսնում...
Բոլորն են եղբայր, բոլորն են ընկեր...

Դողաց մարմինքս, ես ընկայ կրկին...
Ցանկարծ հեռուից իմ հասան ականջին
Թմբկի ու փողի յաղթական ձայներ,
Ոգեշունչ երգեր, ուրախ գոչիւններ։

Դա՝ մի թափոր էր—տօնը յաղթութեան
Արիւնով փրկուած մարդկութեան,
Մեծ տօնը կեանքի մի նոր ու արդար—
Ամենքը՝ ընկեր, ամենքը՝ եղբայր։

Եւ ահա կարծես իջան երկնքից
Տաւիղի ձայներ հնչիւն հոսանքով,
Նոյնպէս ներդաշնակ, նոյնպէս սիրալից,
Ինչպէս և նոր կեանքն իրա բերկրանքով։

Ներդաշնակ ձայներն օդն էին լցնում,
Ծպտում աստղերը, լուսինն էր փայլում,
Իսկ՝ ես դիերի մէջ, դաշտում սգաւոր
Դեռ ընկած էի կրծքով վիրաւոր...

14 դեկտեմբերի, 1891 թ.։